1627–8·

Զմեղապարտ զԱստուածատուր զպիրս յիշեցէք յաղօթս ձեր, ով պատուական հարք և նազելի եղբարք։։։ Թվ· ՌՀԶ գրեցաւ ժամագիրքս։ [ի կամենից]։

1628·

։։։ Յիշելոյ արժան արէք զիս զանարժան
ԶՅակոբ երէցըս Թոխաթցի տաժանական.
Որ եմ պանդուխտ յայսմ աշխարհի տարարնական,
Լեհաց երկիրն, ի նոր քաղաքըն Զամոսցան.
Այլ և ըզծնողն իմ յիշեցէք ի ժամ հայցման,
Զմեծահաւատ հայրն իմ Ալթուն, զմայրն իմ Աննան.
Ոչ ժամանեալ նոցա ի հասակ ծերութեան,
Այլ ի միջակ տիս հասակի վախճանեցան.
Եւ զվարժապետն իմ բարեբախտ արիական՝
Զ Այվաթեանց Յակոբ անուն սուրբ քահանայն.
Իմաստիւք լի գերակատար ի գիտութեան,
Հոգւով մաքուր, մարմնով ճգնող ի ծերութեան.
Եւ զամենայն ըզմերձաւորս իմոյ արեան,
Եւ զժողովուրդ այս քաղաքիս զամենեսեան.
Զծեր և զտղայ, զերիտասարդ և ըզկուսան.
Եւ որք եդեալ են հաւատով ի գերեզման։
Ի թուականի մեծ տումարիս արեթական
Որ էր հազար եօթանասուն, այլ և վեց ամ,
Ես մեղաւոր շարագրեցի սակաւ զայս բան.
Ընծայեցի բանասիրաց ի վայելման.
Զի եղիցի սա յիշատակ ինձ անվախճան,
Եւ աղօթող առ Տէր Աստուած միշտ անխափան.
Այլ և լիցի փառաբանող Երրորդութեանն,
Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, միշտ յաւիտեան։։։

Արդ գրեցաւ սա ձեռամբ Յակոբի սորին շարագրողի բազմամեղի և յոգնասղալ յանցաւորի, ի յիշատակ հոգւոյս տկարի· ի թուականութեանս հայկական տումարի ՌՀԷ ամի, ի 25 յունվարի ամսոյ, յանգ ելաւ շնորհօք Ս· Հոգւոյն, ի քաղաքս Զամոսցա, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնին։ Եւ ի ժամանակս յայս կաթողիկոս ի Ս· Էջմիածին ոչ գիտեմք թէ ով ոք է· վասն զի յանցեալ ամի՝ որ էր թուականն Հայոց ՌՀԶ, վախճան ընկալաւ Տէր Մելքիսեդ կաթողիկոսն ի Կամէնէց։ Բայց առաջնորդ Իլովայ էր Տէր Նիկողայոս նորընծայ յաթոռ իւր· զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ· ամէն։